# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N Ի2017/0428/4

ք. Երևան "05" մայիսի 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հայկական Ծրագրեր ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն [illegible] Սարգսյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀԾ-Հաշվապահ 6» ծրագրի աշխատանքների համար համակարգչի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմանների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ որի հայտնաբերման պահից ողջամիտ ժամկետում Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինելու պահանջով և պահանջել Կատարողից վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագրից կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ընդունել և վճարել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության դիմաց, իսկ Ծառայության թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքը ընդունելու դեպքում Կատարողին վճարել ընդունված Ծառայության արժեքը, իսկ վճարման ուշացման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով սահմանված տույժը.

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունել իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չվճարման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով մատուցել Ծառայությունը՝ պահպանելով գործող օրենսդրությունը:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում երեք օրվա ընթացքում նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրը կամ դրա մի մասի կատարման արդյունքների ընդունումը Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է, երկկողմ հաստատված փաստաթղթով՝ ներկայացված սույն պայմանագրի կցված ձևաչափով:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություն երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հայցի պարզաբանման համար ձեռնարկում է նման դրույթների համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվանից հինգերորդ ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետների ավարտին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 170.000.00 (Մեկ հարյուր յոթանասուն հազար դրամ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները.

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը.

4.2. Պատվիրատուն սույն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է ավելի ուշ, քան տվյալ 20 ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 աշխատանքային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակացույցի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում վճարման միջոցներ նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ..

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար.

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված ժամանակացույցով չպահպանված (ոչ պատշաճ մատուցված) Ծառայության մատուցման յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տույժ՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժերը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 04.04.2017 թվականից:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի ամենամյա բյուջեի կատարման նպատակով հատկացված կամ վերահատկացված կամ բաշխման ընթացքի արդյունքում արձանագրվում է, որ սույն գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և փաստեր), կամ մերժվելու ենթակա հայտով հաղթող ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Այդ դեպքում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուին կրած վնասները այն մասով, որը չի ծածկվում մինչև լուծումը գործած պայմանագրի կատարումից Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրեր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների ծավալը չկատարման պատճառով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնման կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Այդ դեպքում պայմանագրի կողմերի պարտավորությունների ծավալը չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել սույն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնման կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցնելուց:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագիրը գործողության մեջ է, ապա նաև այդ պայմանագրի հետ կապված յուրաքանչյուր տարրերին կցված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են ավելի Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության ժամկետների կամ սույն պայմանագրի գնի արտահայտված փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի կատարման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել միայն սույն պայմանագրով այդ ժամկետում լրանալը պայմանագրի կողմի անկախ նախնական անհրաժեշտության դեպքում պայմանով, որ Պատվիրատուն դրա համար չի վճարել գնման առարկայի օգտագործման պայմանը: Այդ դեպքում սույն կետով

սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել, ոչ ավել քան մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) անվանումը (իրավաբանական անձանց) կամ կրած փոխանցում տվյալ կողմի անունը կամ կրած անվանումն են:

Սույն պայմանագրի Կողմերի երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, որոնք են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կապվում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիման վրա պայմանագրի լուծման կամ միակողմանի լուծման դեպքում Պատվիրատուն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, պայմանագիրը կնքած անձի պատասխանատվության մասին տեղեկությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում: Կողմը համաձայնվում է, որ Կատարողը, պայմանագրից միակողմանի լուծման դեպքում, ներառվում է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող զիջվել այլ պայմանագրից ծագած հանդիպակած պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնքված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011016988
ՀՎՀՀ 01506515

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Հայկական Մրազգրեր ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010002240100
ՀՎՀՀ 00807555

Գ Ասոցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1
"05" մայիսի 2017թ. կնքված
N H2017/1128/1 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Մատուցվող ծառայության նկարագիրը | |
|---|---|
| Կատարողը ապահովում է Պատվիրատուի մոտ տեղադրված Համակարգը, ինչը ներառում է<br>• Համակարգի շահագործման հետ կապված խորհրդատվություն:<br>• Կատարողի կողմից մշակված պարբերականությամբ Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում, որոնք պարունակում են հաշվապահական և հարկային նախագծերի վերաբերյալ փոփոխությունները և նոր ֆունկցիոնալ հնարավորությունները: | |
| Ծառայության մատուցման ժամկետը | |
| Սկիզբը | Ավարտը |
| 04.04.2017 | 03.04.2016 |

* Կատարողը ծառայությունները մատուցում է ք.Երևան, Չարենցի 1 հասցեում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հայկական Ծրագրեր ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3 | ք.Երևան, Չարենցի 1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Արդշինինվեստբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011016988 | Հ/Հ 2500010002240100 |
| ՀՎՀՀ 01506515 | ՀՎՀՀ 00807555 |
| (ստորագրություն) | Կ.Սարգսյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 2
"05" մայիսի 2017թ. կնքված
N [illegible]2017/0428/4 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայի (ապրանքի) անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ըստ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | «ՀԾ Հաշվապահ 6» ծրագրի աշխատանքի համար համակարգի սպասարկում | | | | | | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 | 170000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011016988
ՀՎՀՀ 01506615

Ա. [illegible]

ստորագրություն

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Հայկական Ծրագրեր ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010002240100
ՀՎՀՀ 00807555

Գ. Սարգսյան

ստորագրություն

Կ.Տ.

Հավելված 3
"05" մայիսի 2017թ. կնքված
N H2017/0428/4 ծածկագրով գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| Հայկական Ծրագրեր ՍՊԸ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| ք.Երևան, Չարենցի 1 | ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3 |
| Արմէկոնոմբանկ ԲԲԸ | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն |
| Հ/Հ 2500100022401000 | Հ/Հ 900011016988 |
| ՀՎՀՀ 02807555 | ՀՎՀՀ 01506515 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

"......" 2017թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ Պետության կարիքների համար ծրագրային ապահովման ծառայությունների մատուցման պետական գնման
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ "   " 2017թ.
Պայմանագրի համարը՝ H2017/0428/4
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավար ......... և Պայմանագրի կողմը՝ ի դեմս Հայկական Ծրագրեր ՍՊԸ տնօրեն Վ. Սարգսյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «...» «......» 20 թ. կազմված գնման հայտը ներկայացնող հանձնաժողովի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված սույն ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և դրանց մատուցման ժամկետներին, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | մատուցման ժամկետը | | կատարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ենթակա գումարի մեծությունը (հազար դրամ) |
| | | | ըստ պայմանագրով նախատեսված ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով նախատեսված ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | «ՏՍ Հայկական ...» աշխատակազմի համար ծառայության մատուցում | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցված են:

| Պայմանագրի կողմ | Պատվիրատուն ընդունեց |
|---|---|
| HAYKAKAN SOFTWARE 02807555 | ստորագրություն |
| | ազգանուն, անուն |
| | Կ.Տ. |

Հավելված 3.1
"05" մայիսի 2017թ. կնքված
N ՈՒ2017/0428/4 ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և Հայկական Ծրագրեր ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև "____" 2017թ. կնքված N ՈՒ2017/0428/4 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը "____" 2017թ. հանձնման ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| «ՀԾ Հաշվապահ 6» Ց/Ն/ց/ աշխատատեղի համար համակարգի սպասարկում | 1 | հատ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ

_______________
ազգանուն, անուն

_______________
ստորագրություն